ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՖԱԹԵՄԻ ՍԵՅԵԴԵՀՆԱՍԻՄ ՍԱՅԵԴՄՈՋԹԱԲԱՅԻ

ՆՈՐ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ

Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ ***Վիկտորիա Ալեքսանդրի Առաքելովա***
Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ***Միհրան Վարդգեսի Գալստյան***
Պատմ. գիտ. դոկտոր

Թերեզա Իշխանի Ամրյան
Պատմ.գիտ.թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. նոյեմբերի 11-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հոկտեմբերի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Պատմական գիտ.թեկնածու ***Ա. Է. Հարությունյան***

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Արդի գլոբալացման գործընթացների, աշխարհում տեղի ունեցող զգալի փոփոխությունների, ճգնաժամերի ֆոնին նկատելի է եզդիական համայնքի ներքին խնդիրների ակտիվացում: Վերջիններս հաճախ պայմանավորված են եզդիների կրոնափոխությամբ՝ որպես վերոհիշյալ համաշխարհային գործընթացների անմիջական հետևանք: Կրոնափոխության արդի պրակտիկաներում եզդիները նախապատվությունը տալիս են նոր-բողոքական դավանանքներին՝ Եհովայի վկաների և Հիսունականների կրոնական ուղղություններին: Վերջին տասնամյակներում այս կրոնական ուղղություններն ակտիվ քարոզչություն են իրականացնում աշխարհում, այդ թվում նաև եզդիական համայնքներում: Կրոնափոխությունն ընդհանուր առմամբ հանգեցնում է մշակութային, սոցիալական, կրոնական, գենդերային ինքնությունների և մտածելակերպերի փոփոխությունների, որոնց ուսումնասիրությունը դառնում է ժամանակի հրամայականը: Կրոնափոխության արդյունքում ստեղծվում են եզդիական նոր համայնքներ, որոնց համակողմանի ուսումնասիրությունը ևս խիստ արդիական է: Ներկա ատենախոսությունը ներառում է Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում և Գերմանիայում ապրող կրոնափոխ եզդիների առօրյա կյանքի և ինքնության փոփոխությունների հետազոտությունը: Ուսումնասիրության թիրախում են գտնվել նաև տարբեր երկրներում ապրող կրոնափոխ եզդիների միջև փոխհարաբերությունների ձևավորման և փոխազդեցությունների գործընթացները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ առաջին անգամը լինելով՝ ներկայացնում է մի ամբողջական կոնցեպտուալ պատկեր այն բոլոր ձևափոխություններով հանդերձ, որոնք տեղի են ունենում կրոնափոխ եզդիների համայնքներում 2017-2020 թթ. ընթացքում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները. Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել եզդիների կրոնափոխության դրդապատճառներն ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում, քննության առնել կրոնափոխությունից հետո նկատվող փոփոխությունները եզդիների սոցիալ-տնտեսական, մշակութային և առօրյա կյանքում, ինչպես և այդ փոփոխությունների ազդեցությունը եզդիների ինքնության վրա: Աշխատանքում առաջադրվել և վերլուծվել են հետևյալ խնդիրները.

- Բացահայտել կրոնափոխության գլխավոր պատճառները և փորձել հասկանալ, թե կրոնական գաղափարախոսությունն ինչպիսի փոփոխությունների է հանգեցնում առօրյա կյանքում, հասարակական հարաբերություններում, ինչպիսի նոր պրակտիկաներ և այլ մշակութային դրսևորումներ է ձևավորում
- Բացահայտել եզդիների միջավայրում Եհովայի վկաների և Հիսունականների կրոնական ուղղությունների տարածման պատճառները
- Ուսումնասիրել նոր կրոններում եզդիների ինքնության փոփոխման օրինաչափությունները
- Գնահատել քարոզիչների դերը նոր կրոնների տարածման գործում և արձանագրել քարոզչության ռազմավարությունները
- Բացահայտել եզդիական սփյուռքի դերը կրոնափոխության մեջ

- Ուսումնասիրել կրոնափոխ եզդիների նոր ստեղծվող համայնքների կառուցվածքը
- Համեմատել ավանդական եզդիների և կրոնափոխ եզդիների համայնքների կառուցվածքները
- Բացահայտել ընտանիքի մասին պատկերացումներն ու առնչվող առօրյա պրակտիկաների փոփոխությունները նոր կրոնական համայնքներում
- Դիտարկել գենդերային դերերի փոփոխությունը կրոնափոխությունից հետո
- Պարզել ծիսական կյանքի փոփոխությունները և ծեսերի վերաիմաստավորումը կրոնափոխ եզդիների շրջանում:

Ատենախոսության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը. Սույն ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվել դաշտային հետազոտության միջոցների լայն կիրառմամբ ուսումնասիրել և դասակարգել այն բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունենում եզդիների շրջանում կրոնափոխությունից հետո: Այդ փոփոխություններն, ընդհանուր առմամբ, դիտարկվել են ավանդական եզդիական համայնքների մոդեռնիզացման գործընթացների համատեքստում: Ավանդական եզդիների կրոնափոխությունը մի կողմից ինքնության փոփոխությունները քննարկելու ուշագրավ դաշտ է ներկայացնում, իսկ մյուս կողմից՝ թույլ է տալիս վերլուծել ու գնահատել տարբեր երկրներում ապրող եզդիների ցանցային կապերի դերը դիտարկվող գործընթացներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը. Աշխատանքի հետազոտական հիմքը կազմում են հեղինակի կողմից իրականացված դաշտային հետազոտությունները 2017-2020 թթ. ընթացքում: Ուսումնասիրությունները կատարվել են Հայաստանի, ինչպես նաև Ռուսաստանի, Վրաստանի և Գերմանիայի կրոնափոխ եզդիների շրջանում: Դաշտային հետազոտությունների հիմքը կազմում են խորին խմբային և անհատական հարցազրույցները: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև առկա այլ ուսումնասիրությունների երկրորդային տվյալներ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը. Ընտրված թեման և առաջադրված խնդիրները պայմանավորել են հետազոտության մեթոդական և մեթոդաբանական հիմքը: Այն ներառում է մարդաբանական հետազոտության հիմնական մեթոդները, մասնավորապես, ներգրավված դիտարկումը և հարցազրույցները: Հարցազրույցների տեսակներից ընտրել ենք խորացված խնդրային, կենսագրական և կենտրոնացված խմբային հարցազրույցները: Ներգրավված դիտարկման մեթոդը կիրառել ենք համաժողովների ընթացքում, ինչպես Երևանում՝ եզդի Եհովայի վկաների կենտրոններից մեկում և կրոնափոխ եզդիների համայնքներում, այնպես էլ եզդի Եհովայի վկաների և Հիսունականների ժողովների ընթացքում: Իրականացվել են ոչ միայն խմբային, այլ նաև անհատական հարցազրույցներ: Ավելի մեծ թվով հարցազրույցներ իրականացվել են եզդի Եհովայի վկաների հետ, քանի որ նրանց թիվը նկատելիորեն ավելի շատ է եզդի Հիսունականներից:

Ատենախոսության տեսական մոտեցումները. Եզդիների կյանքի, պատմական անցյալի, մշակույթի, ծեսերի և սովորույթների մասին տարբեր տարիներին և տարբեր երկրներում գրվել են գիտական աշխատություններ, որտեղ մանրամասն

ներկայացվել և վերլուծվել են եզդիների կյանքը՝ նրանց գոյատևման ողջ ընթացքում: Ատենախոսության համար հիմնարար են եղել այս աղբյուրները (Guest 1987, Kreyenbroek 1995, Melkumyan 2018, Փոլադյան 2012, Аракелова 2006, Асатрян, Аракелова 2002, Анкоси 1996)՝ համեմատական քննությամբ վեր հանելու համար եզդիների կյանքն ու կենցաղն ավանդական և նոր կրոնափոխ համայնքներում: Կրոնափոխությունն օրինաչափորեն բերում է եզդիների աշխարհայացքի և կենսակերպի փոփոխությունների: Դրանց համակողմանի ուսումնասիրությունն իրականացվել է հենվելով երեք տեսությունների վրա: Դրանցից պայմանականորեն առաջինը Բրուբեյքերի և Կուպերի համատեղ աշխատանքն է ինքնության տեսության մասին: Ատենախոսության մեջ փորձ է արվել ուսումնասիրել և բացատրել եզդիների ինքնության փոփոխությունները կրոնափոխությունից հետո, ինչպես նաև ցույց տալ, թե ինչ գործոններ էին ընկած այդ փոփոխությունների հիմքում խորհրդային և հետխորհրդային շրջաններում: Քանի որ այս տեսության մեջ հստակ սահմանված են ինքնության բառեզրերը և մանրամասն բնութագրված են ինքնությունը ձևավորող բոլոր հիմնական առումները, այն շատ կիրառելի էր նաև եզդիների ինքնության քննության համար (Brubaker, Cooper 2000, 21): Հաջորդը Դելյոզի «ռիզոմա» անունը ստացած ցանցային տեսությունն է (Deleuze, Guattari 1987, 3-28), որի միջոցով փորձել ենք ցույց տալ ցանցային գործոնի դերը եզդիների կրոնափոխության մեջ: Մասնավորապես, Հայաստանի եզդիների կրոնափոխության գործում քարոզչությունը տեղի է ունենում հիմնականում Հայաստանում բնակվող և այլ երկրներից ժամանած բարեկամների, ծանոթների, հարևանների ցանցի միջոցով, և ինչպես ձևակերպում են Դելեզն ու Գվատարին, այդ ցանցերը կարող են չունենալ հիերարխիկ համակարգ, հստակ սահմաններ և մի կապի ընդհատումը կարող է արագ փոխարինվել մեկ այլ ցանցային օղակով: Հետազոտության համար առանցքային են եղել նաև Գոֆմանի՝ «Անհատը առօրյա կյանքում» աշխատության դրույթները: Ըստ Գոֆմանի տեսության՝ միմյանց հետ շփվելիս՝ մարդիկ կարծես դերասաններ լինեն, որոնք խոսում և «խաղում» են բեմում և ներկայանում են այնպես, ինչպես կուզենար տեսնել նրանց հանդիսատեսը (Gofman 1956): Կրոնափոխ եզդիների պահվածքը նույնպես կարելի է տեղավորել նման համեմատական պատկերի մեջ: Այս տեսությունը կիրառելով՝ ցույց ենք տվել, թե ինչպես է կրոնափոխ եզդին դրսևորում իրեն բոլորովին տարբեր կերպ իր ավանդական համայնքում և նոր համայնքում, ինչն էլ խոսում է եզդիական նոր ինքնությունների ձևավորման մասին:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները. Աշխատանքը քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության Ազգաբանության բաժնում՝ արժանանալով դրական կարծիքի: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են յոթ գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել Հայաստանի և արտասահմանյան հրատարակչություններում: Ատենախոսության մեջ քննարկվող հայեցակետերը, հարցադրումներն ու դրույթները ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսությունը եզրափակվում է հավելվածով (լուսանկարներ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում է հիմնահարցի կարևորությունը, դաշտային հետազոտությունների արդյունքում թեմայի ուսումնասիրության առանձնահատկությունը, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև հետազոտության մեթոդաբանական և աղբյուրագիտական հիմքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԿՐՈՆԱՓՈԽ ԵԶԴԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.1. Եզդիների կրոնափոխության պատճառները, նոր ինքնության հարցը. Սույն ենթագլխում ներկայացվում և վերլուծվում են այն ներքին (կաստայական խտրականություն, կնոջ և տղամարդու անհավասար դիրք և իրավունքներ ընտանիքում, թերի կրթություն և այլն) և արտաքին (տեղեկատվական միջոցների դերի աննախադեպ աճ և այլն) հիմքերը, որոնք բերեցին եզդիների կրոնափոխության ակտիվ ալիքի ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում (Վրաստան, Ռուսաստան, Գերմանիա և այլն): Դաշտային նյութերի հավաքմամբ և վերլուծությամբ վեր են հանվել այն հիմնական գործոնները, որոնք վճռորոշ են եղել դեպի նոր կրոնական ուղղությունների, մասնավորապես Եհովայի վկաների և Հիսունականների կրոնական համայնքներ եզդիների հոսքի մեջ: Վերջին շրջանում եզդիների կրոնափոխության այս գործընթացը սկիզբ դրեց նրանց ինքնության տրանսֆորմացիային: Դառնալով Եհովայի վկա կամ Հիսունական և հայտնվելով նոր համայնքում ու միջավայրում՝ եզդիները՝ նոր կրոնի պահանջների և աշխարհընկալման ներքո հաճախ կորցնում են իրենց ինքնությունը: Կտրվելով իրենց արմատներից՝ նրանք միաձուլվում են նոր համայնքին՝ դառնալով նրա մի մասնիկը: Մյուս կողմից, կրոնափոխությունը եզդիական համայնքների մոդեռնիզացման հիմքն է դառնում՝ սասանելով ավանդական եզդիական կենսակերպն ու աշխարհայացքը:

1.2. **Հայաստանի եզդի Եհովայի վկաների և եզդի Հիսունականների փոխընկալումներն ու փոխհարաբերությունները.** Այս ենթագլխում մանրամասն ուսումնասիրվել են եզդի Եհովայի վկաների և Հիսունականների առանձին համայնքների ստեղծման առանձնահատկությունները, վեր են հանվել սոցիալական և հոգեբանական փոփոխությունները: Եզդի Եհովայի վկաների համայնքի մեծամասնությունը կրոնափոխ եզդիներ են, սակայն համայնքում ապրում են նաև հայկական ինքնությամբ ընտանիքներ, որոնք տիրապետում են եզդիերենին և ապրելով համայնքում՝ օգնում են եզդիներին քարոզչության ժամանակ: Այստեղ

կաստաները բացակայում են: Նրանց ղեկավարում է ձեռնադրված երեցը, որն անպայման պետք է տղամարդ լինի և ունենա հոգևոր բարձր կրթություն: Եզդի Հիսունականների համայնքները բաղկացած են միայն կրոնափոխ եզդիներից: Համայնքը ղեկավարում է հոգևոր հովիվը, որը պարտադիր պետք է տղամարդ լինի և ունենա բավարար կրթություն (աստվածաբանական դպրոցի երեցի կոչում): Եզդի Եհովայի վկաները և Հիսունականները հիմնականում չեն ապրում նույն բնակավայրերում: Եհովայի վկաները Հիսունականների կրոնը համարում են սատանայական, իսկ Հիսունականներին՝ հետամնաց մարդիկ: Հիսունականները թեև ասում են, որ բոլոր մարդիկ հավասար են, սակայն չեն համակրում Եհովայի վկաներին՝ նշելով, որ նրանք շատ ազատամիտ են: Եհովայի վկա քարոզիչները քարոզելիս՝ Հիսունականներին սատանայապաշտ, անհավասարակշիռ մարդիկ են ներկայացնում, քանի որ աղոթելիս հեկեկում են, լաց լինելով են աղոթում: Ըստ նրանց՝ միակ ճշմարիտ կրոնը Եհովայի վկաների ուսմունքն է: Հիսունականներն էլ իրենց հերթին չեն ընդունում Եհովայի վկաների ուսմունքը որպես կրոն՝ նշելով, որ Եհովայի վկաները փոխել են Աստվածաշնչի բովանդակությունը, ուստի այն աղանդ է և ոչ թե կրոն, իսկ միակ ճշմարիտ կրոնը համարում են իրենցը: Կան իրար հակադրվող որոշ առօրյա նորմեր ևս: Օրինակ, Հիսունականները գտնում են, որ Եհովայի վկաները, նամանավանդ կանայք, իրենց արտաքինին շատ են հետևում, շպարվում են՝ այդպիսով հեռանալով Աստծու կողմից տրված բնական գեղեցկությունից: Իրենց հերթին Եհովայի վկաները Հիսունականներին, մասնավորապես Հիսունական կանանց, մեղադրում են անխնամ տեսքի համար՝ համարելով, որ կինը պետք է խնամված լինի:

1.3. Տեղական և միջազգային համաժողովները որպես կառավարման մարմին. Այս ենթագլխում վերլուծվում է Եհովայի վկաների և Հիսունականների միջազգային և տեղական կառույցների համակարգված աշխատանքը, մասնավորապես թե ինչ միջոցներով են կենտրոնական մարմինները տեղեկանում ողջ աշխարհի հավատացյալներից (հավատացյալների թիվ, նրանց սոցիալական խնդիրներ, նոր համայնքների կազմավորում, ժողովների անցկացման համար նոր սրահներին վերաբերող զանազան հարցեր և այլն): Կենտրոնական մարմինները գործադրում են տեղական և միջազգային համաժողովների հարթակը: Տեղական ժողովները տեղի են ունենում շաբաթը 2-3 անգամ, իսկ միջազգային համաժողովները՝ տարին 2-3 անգամ: Ե՛վ Եհովայի վկաների, և՛ Հիսունականների կենտրոնական մարմինները հաստատում են յուրաքանչյուր ժողովի օրակարգը: Ժողովներն աշխարհի տարբեր երկրներում անցկացվում են նույն օրը և որոշված օրակարգով: Այս ժողովների միջոցով կենտրոնական մարմինը ղեկավարում և հսկում է աշխարհով սփռված հավատացյալների գործունեությունը և ապահովում կապը տարբեր երկրների հավատացյալների միջև:

1.4. Հայաստանի ավանդական եզդիների, եզդի Եհովայի վկաների և եզդի Հիսունականների համայնքների ֆինանսական հարցերը. Այս ենթագլխում ներկայացվում է եզդիների ավանդական համայնքի և Եհովայի վկաների ու Հիսունականների համայնքի ֆինանսական կառուցվածքը: Եզդիների ավանդական համայնքում աշխարհիկ կաստայի ներկայացուցիչները՝ մրիդները, հիմնականում

զբաղվում են անասնապահությամբ և իրենց աշխատած գումարի մի զգալի մասը նրանք հատկացնում են հոգևոր դասին՝ շեյխերին և փիրերին՝ տարբեր հոգևոր ծեսերի և արարողությունների անցկացման դիմաց: Եհովայի վկաների և Հիսունականների ֆինանսական հարցերը ղեկավարվում և հսկվում են կենտրոնական կառավարման մարմնի կողմից, որին հաշվետվություն են ներկայացնում տարբեր երկրների համայնքներում գործող մասնաճյուղերի երեցները: Եհովայի վկաների և Հիսունականների կենտրոնական մարմիններն էլ իրենց հերթին կոնկրետ թվերով հաշվետվություն են ներկայացնում ժողովների ժամանակ հավատացյալների կողմից նվիրաբերված գումարների ծախսերի մասին (նոր սրահների կահավորում, բուկլետների և գրքերի հրատարակում, կարիքավոր հավատացյալներին օժանդակություն և այլն):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԵՎ ՀԻՍՈՒՆԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԶԴԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

2.1. Լեզվի հարցը. Այս ենթագլխում քննարկվում է այն հարցը, թե որն է Եհովայի վկաների և Հիսունականների ժողովների լեզվի փոփոխության պատճառը: Սկզբնական շրջանում ժողովներն անցկացվում էին հայերենով, իսկ որոշ ժամանակ անց հայերենը փոխարինվեց եզդիերենով: Չնայած եզդիների ճնշող մեծամասնությունը տիրապետում էր հայերենին, սակայն եզդիների համար Աստվածաշնչի ընթերցումը և մեկնաբանումը ոչ խոսակցական հայերենով բավական բարդ էր և ստեղծում էր հավելյալ լարվածություն: Բացի դրանից, ժողովներին մեծաթիվ հայերի մասնակցությունը եզդիների համար որոշակի խորթություն էր ստեղծում: Այս ամենի պատճառով եզդիները սկսեցին ավելի քիչ հաճախել Եհովայի վկաների և Հիսունականների ժողովներին: Հայերը սովորելով եզդիերեն լեզուն՝ սկսեցին եզդիներին քարոզել եզդիերենով: Եհովայի վկաները շուտով սկսեցին իրենց ժողովները եզդիների համար անցկացնել եզդիերենով, իսկ Հիսունականներն անցկացնում էին թե՛ հայերենով, թե՛ եզդիերենով, քանի որ ժողովներին ներկա էին լինում նաև հայերը: Որոշ ժամանակ անց, հավատացյալների քանակի ավելացմանը զուգընթաց, սկսեցին պատրաստել նաև եզդի քարոզիչներ: Ամբողջ գրականությունը, բուկլետները, ֆիլմերը և ժողովները նույնպես ստեղծվում էր բացառապես եզդիերենով: Այս ամենի շնորհիվ մեծապես ավելացավ Եհովայի վկաների և Հիսունականների կրոններին անդամագրվող եզդիների քանակը:

2.2. Եզդի քարոզիչներ. Այս ենթագլխում ներկայացվում է եզդի քարոզիչների կարևոր դերը եզդիական ավանդական համայնքում՝ Եհովայի վկաների և Հիսունականների կրոնների տարածման գործում: Քարոզիչները քարոզելու հմտությունները ձեռք են բերում հատուկ քարոզչության համար ստեղծված դասընթացներում: Ձեռք բերելով քարոզչական պատրաստվածություն և արհեստավարժություն՝ նրանք իրենց գործունեությունը ծավալում են հիմնականում եզդիական այնպիսի համայնքներում, որտեղ առավել ակնհայտ են գենդերային,

կաստայական անհավասարությունը, որտեղ մարդիկ գտնվում են սոցիալապես ոչ բարվոք վիճակում, որտեղ նրանց մեծամասնությունն ունի թերի կրթություն, իսկ շատերն ընդհանրապես չեն տիրապետում գրելու և կարդալու հմտություններին: Հետազոտության արդյունքում վեր են հանվել երկու կրոնական ուղղությունների քարոզչության նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև քարոզչության առանձնահատկությունները:

2.3. Այլ երկրների կրոնափոխ եզդիների ներգրավվածությունը նոր կրոնական համայնքներում. Այս ենթագլխում ուսումնասիրվում է տարբեր երկրներում գործող նոր կրոնական համայնքներում ընդգրկված եզդիների համագործակցությունը Հայաստանի ավանդական և կրոնափոխ եզդիների հետ: Այս համագործակցությունը նպաստում է երկրից երկիր կրոնի շղթայական տարածման գործընթացին: Վերջինս հիշեցնում է Դելյոզի և Գվատարիի առաջ քաշած տեսությունը (ռիզոմա), ըստ որի՝ բնությունը, կենդանական աշխարհը և մարդկությունը փոխկապակցված են՝ տարածվելով բազմացող սնկերի միաձուլված արմատների նման (Deleuze, Guattari 1987, 3-28): Այստեղ քարոզչություն է իրականացվում տարբեր մակարդակներում՝ սկսած հարազատների և մոտիկ բարեկամների կամ հարևանների շրջանակից մինչև ուրիշ բնակավայրեր, նույնիսկ՝ այլ երկրներ, ընդ որում, այս բոլոր մակարդակներում աշխատում են ցանցային ձևով՝ իրար հետ փոխկապակցված: Թե՛ եզդի Եհովայի վկաները, թե՛ Հիսունականները Հայաստանում մշտական կապի մեջ են տեղի հայ Եհովայի վկաների և Հիսունականների հետ, և վերջիններս մեծապես նպաստել են նրանց կրոնափոխությանը: Այս հարաբերությունների սերտությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ երկու կրոններն էլ չեն ճանաչում ազգություն և նրանց համար գլխավորը պատկանելությունն է նույն կրոնին: Եզդիների կրոնափոխությունը և ընդգրկումը հիմնականում Եհովայի վկաների և Հիսունականների կրոնական համայնքների մեջ տեղի է ունենում ոչ միայն այն պատճառով, որ նոր կրոնները մարդուն առաջարկում են իր խնդիրների լուծման բանալին, այլ շատ հաճախ բարեկամական ցանցը նպաստում է կրոնափոխությանը:

2.4. Տեղական և միջազգային համաժողովները որպես քարոզչության գործիք. Այս ենթագլխում ներկայացվում է, թե ինչպես են Եհովայի վկաները և Հիսունականները, օգտագործելով համաժողովների հարթակը՝ ակտիվ քարոզչություն իրագործում: Այս ժողովների ժամանակ քարոզիչն Աստվածաշնչից հատվածներ է կարդում, հաճախ զուգահեռաբար ցուցադրում այդ թեմայով ոչ մեծ տեսաֆիլմ, ընթերցում և վերլուծում է թեմայի վերաբերյալ փոքր գրքույկներ, որոնք նախապես բաժանվում են հավատացյալներին: Տեղական և միջազգային ժողովները շատ կարևոր են թե՛ Եհովայի վկաների, թե՛ Հիսունականների համայնքներում: Եհովայի վկաների տեղական ժողովները տեղի են ունենում շաբաթը երկու անգամ: Այս ժողովները կարևոր են այն առումով, որ հավատացյալները հնարավորություն են ստանում քննարկումների շնորհիվ գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները և ուսումնասիրել Աստվածաշունչը մյուսների հետ միասին: Հիսունականների տեղական ժողովները տեղի են ունենում շաբաթը հինգ անգամ: Դրանց ժամանակ ևս հավատացյալները միասին ուսումնասիրում և քննարկում են Աստվածաշնչից վերցված

տարբեր թեմաներ: Տեղական ժողովները երկու կրոններում էլ հնարավորություն են ընձեռում Աստվածաշնչի խմբային ուսումնասիրություն կատարել: Այս ժողովներն ունեն նաև կոնկրետ թեմատիկ ուղղվածություն (օրինակ՝ ընտանիքի մասին, երիտասարդների մասին և այլն), թեմաները որոշվում են նախապես: Ուսումնասիրում են Աստվածաշունչը, վերլուծում այն, երգում հոգևոր երգեր և աղոթում: Սակայն միջազգային համաժողովների նպատակը երկու կրոններում էլ տարբեր երկրների կրոնափոխ եզդիների համախմբումն ու նրանց կապերի ընդլայնումն է:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԿՐՈՆԱԾԻՍԱԿԱՆ ԿՅԱՆՔ

3.1. Աղոթք և աղոթավայր. Կրոնափոխությունից հետո եզդիները սկսում են ապրել նոր կրոնի պահանջներով և օրենքներով: Նրանք դադարեցնում են իրենց նախկին ծեսերին և տոներին հետևելը: Եթե նախկինում նրանք իրենց խնդիրների լուծման համար դիմում էին շեյխերին և փիրերին, այդպես հիմա, կրոնափոխվելուց հետո, նրանք աղոթքով դիմում են Աստծուն՝ հայցելով նրա օգնությունը սեփական խնդիրների լուծման գործում: Նոր կրոններում եզդիներն Աստծուն ավելի մոտ լինելու հնարավորություն են ստանում: Աղոթքը ձեռք է բերում նոր՝ կարևոր նշանակություն նրանց կյանքում: Եթե նախկինում մրիդները զրկված էին հոգևոր գործունեություն ծավալելու իրավունքից, ապա նոր կրոններում բոլոր եզդիները հավասար են, նրանք տանն ամեն օր աղոթում են, իսկ խմբային աղոթքներ անում են ժողովների ընթացքում: Նոր կրոններն ընդունելուց հետո, ապրելակերպի և մտածելակերպի փոփոխություններին զուգընթաց, վերաարժևորվում է նաև վերաբերմունքն աղոթքի նկատմամբ: Նրանք իրենց կյանքը նվիրում են Աստծուն ծառայելուն, ապրում են հոգևոր կյանքով, օրվա մեծ մասն անցկացնում են Աստվածաշնչի ուսումնասիրությամբ:

3.2. Ծնունդ և մկրտություն. Այս ենթագլխում համեմատական վերլուծությամբ ներկայացվում են ավանդական եզդիների, Եհովայի վկաների և Հիսունականների ծիսակարգերը և օրենքները երեխայի ծննդյան ու մկրտության հետ կապված: Ներկայացվում են այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում կրոնափոխությունից հետո՝ ըստ նոր կրոնների պահանջների: Ավանդական եզդիների միջավայրում երեխան ծնվելուց հետո արդեն եզդի է համարվում, որի դավանանքը եզդիզմն է: Ըստ Եհովայի վկաների և Հիսունականների կրոնների՝ անձը կարող է մկրտվել և համարվել նոր կրոնի կրող՝ Աստվածաշունչն ուսումնասիրելուց և բավարար գիտելիքներ ձեռք բերելուց հետո միայն: Եհովայի վկաների կամ Հիսունականների ընտանիքում ծնվելը երեխային ինքնաբերաբար չի դարձնում Եհովայի վկա կամ Հիսունական: Հիսունականների շրջանում ընդունված է մկրտել երեխաներին 18 տարեկանում, իսկ Եհովայի վկաներն այս հարցում չունեն տարիքային սահմանափակում:

3.3. Հարսանիք. Նոր կրոնների ընդունումը նկատելի փոփոխության ենթարկեց ինչպես եզդիների ավանդական մոտեցումներն ամուսնությանն առնչվող շատ

հարցերին, մասնավորապես օրինական գրանցմանը, այնպես էլ բուն հարսանյաց ծիսակարգը՝ ընդհանուր առմամբ դարձնելով այն ավելի զուսպ և համեստ: Տեսանելի միտում է ավանդական հասարակության արժեհամակարգից և համապատասխան ծիսակարգից անցումը դեպի ավելի արդիական արժեհամակարգ, որտեղ խրախուսվում են անհատական որոշումներն ու միջանձնային հարաբերությունների ոչ այնքան համայնքային, որքան ինստիտուցիոնալ կարգավորումները (հմմտ. ամուսնության գրանցումն ու աղջիկների ամուսնության տարիքի բարձրացումը): Թվում է, թե կրոնական համայնքը միջանձնային առօրյան և ծիսական հարաբերությունները պետք է դարձներ ավելի համայնական, սակայն ընդհակառակը, այս նոր կրոնական ուղղություններում պատուհան է բացվում սոցիալական կյանքի արդիականացման համար՝ ի տարբերություն ավանդական կրոնա-էթնիկական համայնքի:

3.4. Թաղման ծիսակարգ. Այս ենթագլխում նկարագրվում է ավանդական եզդիների թաղման ծիսակարգը, որը ձևավորվել է դարերի ընթացքում: Ներկայացվում են այն բոլոր հոգեբանական և ծիսակարգային փոփոխությունները, որոնք բերում են նոր կրոնական ուղղությունները:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔ

4.1. Կրոնափոխ եզդիների փոխհարաբերություններն ավանդական եզդիական համայնքների հետ. Այս ենթագլխում ներկայացվում է ավանդական և կրոնափոխ եզդիների փոխհարաբերությունները: Քննարկվում է կրոնափոխության ազդեցությունը մի կողմից անհատի, մյուս կողմից՝ ընտանիքի և համայնքի միջև հարաբերությունների վրա: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ավանդական համայնքներում բավականին դժվար են ընդունում կրոնափոխ համայնականներին, լինում են դեպքեր, երբ կրոնափոխ երիտասարդները ստիպված են լինում հեռանալ իրենց գյուղից և հաստատվել այլ վայրերում: Նոր իրավիճակում ստեղծվում են եզդի Եհովայի վկաների և Հիսունականների առանձին համայնքներ: Այն ավանդական եզդիական համայնքները, որոնցում կրոնափոխ եզդիների քանակը քիչ է, կրոնափոխ եզդիները հանդիպում են շատ ավելի լուրջ խնդիրների և հալածանքների: Այսպիսով, կրոնափոխությունից հետո եզդիական ավանդական համայնքից հեռանալն ու ապրելը նոր համայնքում, խիստ սահմանափակում է շփումներն ավանդական և կրոնափոխ եզդիների միջև: Նոր կրոնների օրենքներով՝ շփումը ընտանիքի, հարազատների և ավանդական համայնքի հետ տեղի է ունենում, թերևս, միայն քարոզելու նպատակով:

4.2. Գենդերային հարաբերությունները. Այս ենթագլխում վերլուծվում են տղամարդու և կնոջ կարգավիճակներն ու դերային ընկալումներն ավանդական և նոր կրոններում: Ինչպես նշել ենք, ավանդական եզդիների մոտ տան գլուխը տղամարդն է, և կինը զրկված է որոշումներ ընդունելու, իր կարծիքն արտահայտելու իրավունքից: Նա ուղղակի պարտավոր է կատարել ամուսնու բոլոր ցանկությունները և հրամանները: Կրոնափոխությունից հետո եզդի կինը հայտնվում է նոր իրավիճակում:

Ձեռք բերելով ազատություն և վայելելով նոր կրոնի ներկայացուցիչների աջակցությունը՝ նա փորձում է իր ընտանիքում հասնել որոշակի իրավունքների՝ ծանոթացնելով ընտանիքի անդամներին նոր կրոնում կնոջը վերապահվող իրավունքներին: Քննարկվում են դեպքեր, թե ինչպես է կինը կարողանում վստահորեն հաղթահարել իր առջև դրված խնդիրները՝ նոր կրոնների շնորհիվ ձեռք բերելով ինքնավստահություն, ազատ խոսքի իրավունք և ինքնահարգանք : Նա և՛ իր ընտանիքում, և՛ համայնքում սկսում է քարոզել իր նոր կրոնը՝ դիմագրավելով բոլոր հալածանքներին:

4.3. Սոցիալական ներգրավվածություն. կրթություն և առողջապահություն. Այս ենթագլխում քննարկվում են կրթության հիմնախնդիրները և, ընդհանուր առմամբ, կրթության նկատմամբ վերաբերմունքի հարցը եզդիական ավանդական համայնքներում: Անդրադառնում ենք կրոնափոխության արդյունքում կրթության դերի փոփոխություններին, հոգևոր և աշխարհիկ կրթության տարանջատմանը: Ավանդական եզդիները մեծ նշանակություն չեն տալիս կրթությանը, նամանավանդ աղջիկների կրթությանը, ինչը չի բացառում դեպքերը, երբ աղջիկները, ստանալով լիարժեք միջնակարգ կրթության, երբեմն նույնիսկ ձեռք են բերում նաև բարձրագույն կրթություն: Որոշ դեպքերում հենց այն հանգամանքը, որ աղջիկներն ավանդական համայնքներում հնարավորություն են ունենում ստանալու միայն թերի միջնակարգ կրթություն, նրանցից որոշներին դրդում է կրոնափոխության՝ լիարժեք կրթություն ստանալու հեռանկարով: Նոր կրոններ ընդունելու շնորհիվ՝ եզդիները, անկախ տարիքից, բոլորը գրաճանաչ են դառնում, որպեսզի կարողանան ուսումնասիրել Աստվածաշունչը: Կրթության տարանջատման հետ կապված Եհովայի վկաների և Հիսունականների մոտ նկատվում են որոշակի տարբերություններ:

Այս ենթագլխում անդրադառնում ենք նաև ավանդական եզդիների շրջանում առողջապահական խնդիրներին, որոնք սերտորեն կապված են կրթության և լուսավորության հետ:Դիտարկվում են եզդիների՝ բազմադարյա փորձով ամրագրված դեղաբույսերի և բուժման ժողովրդական միջոցների կիրառության պրակտիկաները և բժշկական դեղամիջոցների հետ դրանց համադրության խնդիրները: Այս համատեքստում ներկայացվում են, մասնավորապես, Եհովայի վկաների հրաժարումը բժշկական որոշ ծառայություններից, նրանց կողմից այս հարցում բերվող հիմնավորումները: Ընդհանուր առմամբ, կրոնափոխությունը որոշակի փոփոխություններ է բերում նաև առողջապահության վերաբերյալ մտածելակերպում:

4.4. Հագուստ և ուտեստ. Եզդիների շրջանում դարերի ընթացքում ձևավորվել է հագուկապի որոշակի մշակույթ, որն աստիճանաբար պարտադիր է դարձել ավանդական եզդիների համար: Կրոնափոխությունից հետո եզդիների հագուկապը զգալիորեն տարբերվում է ավանդական եզդիների հագուկապից, ավելին, նրանք ունեն իրենց յուրահատուկ հագնվելու ոճը: Այս ենթագլխում քննարկվում են կրոնափոխ եզդիների հագուկապի փոփոխությունները՝ ըստ նոր կրոնների պահանջների: Դրանք անմիջականորեն կապված են նոր կրոնական ուղղություններում անձի նոր արժեհամակարգի, անձի վերաիմաստավորման հետ: Ենթագլխում անդրադառնում ենք նաև ուտեստի հետ կապված որոշ խնդրների, մասնավորապես ներկայացվում են

այն սննդամթերքները, որոնց օգտագործումն արգելվում էր ավանդական եզդիների շրջանում՝ դարերի խորքից եկող կրոնական պահանջներին համապատասխան: Կրոնափոխությունը մի կողմից վերացնում է այդ սննդամթերքների օգտագործման արգելքը, մյուս կողմից սեփական սահմանափակումներն է բերում՝ կապված ոգելից խմիչքների, ծխախոտի և այլնի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզդիները դարեր շարունակ ապրել են պահպանելով իրենց միակ կրոնը՝ Եզդիզմը «շարֆադին», ստեղծել են հարուստ ավանդույթներ և ծեսեր՝ հետևելով եզդիական սոցիալ-կրոնական հիերարխիայի օրենքներին: Եզդիների մեծ մասը վերջին տասնամյակների ընթացքում փոխել է իր կրոնը՝ իբրև հետևանք աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիոն գործընթացների, համայնքի ներսում աճող խնդիրների (կապված գենդերային գործոնի, անչափահասների ամուսնությունների, կաստայական համակարգի և այլնի հետ), կենսակերպի էական փոփոխությունների, ինչպես նաև հոգևոր ճգնաժամերի: Մյուս կողմից, կրոնափոխությանը նպաստել է վերջին երեք տասնամյակներում նոր-բողոքական կրոնական փոքրամասնությունների ակտիվ քարոզը եզդիական համայնքներում: Ավանդական եզդիների շրջանում նկատվեց հետաքրքրություն Հայաստան ներթափանցած նոր-բողոքական կրոնական ուղղությունների նկատմամբ: Մեծաթիվ եզդիներ ընդունեցին Եհովայի վկաների և Հիսունականների կրոնները, որի հետևանքով տեղի ունեցան խորքային փոփոխություններ եզդիական համայնքների ներսում. մարդկանց մտածելակերպում, նրանց ինքնության, ծեսերի կատարման, առօրյա կյանքի շատ կողմերում: Փոխվեց եզդիների սոցիալ-տնտեսական կարգավիճակը: Եթե նախկինում նրանք ապրում էին գյուղերում՝ հիմնականում զբաղվելով անասնապահությամբ, խստորեն հետևելով բոլոր ավանդական ծեսերի կատարմանը, ապա կրոնափոխությունից հետո եզդիները ստիպված ստեղծում են նոր համայնքներ կամ միանում են Եհովայի վկաների ու Հիսունականների արդեն ստեղծած համայնքներին քաղաքային միջավայրերում, քանի որ ավանդական համայնքներում նրանք ենթարկվում են հալածանքների, անարգանքի և անհնարին է դառնում դրանցում ապրելը՝ նոր կրոնի օրենքներին համապատասխան:

Կրոնափոխության ենթարկվում են մեծամասամբ մրիդները, որոնք հեռանում են իրենց ավանդական համայնքից և ապրում նոր համայնքներում՝ զերծ կաստայական կառուցվածքից: Թե՛ Եհովայի վկաների, թե՛ Հիսունականների նորաստեղծ համայնքներում համայնքի հոգևոր հովիվ է դառնում մրիդը: Եզդիական ավանդական կրոնում երբևէ մրիդը չէր կարող դառնալ հոգևոր կաստայի ներկայացուցիչ: Եհովայի վկաները և Հիսունականները հոգևոր հովիվ ընտրելիս հաշվի են առնում բացառապես անձի աստվածաբանական գիտելիքների մակարդակը, ընդ որում, աստվածաբանական դպրոցներում կարող են սովորել բոլոր հավատացյալները (իգական սեռը՝ մինչև Ռահվիրաների դպրոց): Դրանով մրիդների առջև բացվում է մեծ

հնարավորություն նոր կրոններում զբաղվել նաև հոգևոր գործունեությամբ և ազատվել կաստայական համակարգից ու սահմանափակումներից:

Ապրելով նոր համայնքներում՝ փոխվում է կրոնափոխ եզդիների առօրյան: Նրանք սկսում են սովորել արհեստներ, որոնք դառնում են նրանց ապրելու հիմնական միջոցը: Օրվա մեծ մասը նրանք զբաղվում են քարոզչությամբ և Աստվածաշնչի ուսումնասիրությամբ: Դժվարությունների ժամանակ իրենց օգնում են նոր կրոնների ներկայացուցիչները:

Կրոնափոխությունն ավանդական համայնքում բերում է նաև գենդերային դերերի փոփոխության: Շփման և վարքի նոր մոդելների յուրացումը կանանց և տղամարդկանց տվեց միմյանց հետ ազատ շփվելու հնարավորություն: Կրոնափոխ կինն իրեն շատ վստահ և պաշտպանված է զգում: Դրա շնորհիվ նա առանց վախի քարոզում է ընտանիքում՝ դիմադրելով ընտանիքի և համայնքի բոլոր հալածանքներին: Իգական սեռի եզդիներն առավել շատ են հակված կրոնափոխության: Ըստ մեր հետազոտությունների՝ կրոնափոխ եզդի կանանց շրջանում էլ առավել մեծ թիվ են կազմում միջին տարիքի կանայք, որոնք կրոնափոխությունից հետո ակտիվ քարոզչություն են իրականացնում հարազատների, բարեկամների և հարևանների շրջանում:

Կրոնափոխված արական սեռի ներկայացուցիչների մեջ շատ են երիտասարդ տղաները: Բացի մրիդներից (որոնք ամենից շատն են կրոնափոխ լինում)՝ երբեմն կրոնափոխ են լինում նաև շեյխերը և փիրերը: Վերջիններս, սակայն, իրենց կրոնափոխությունը խիստ գաղտնի են պահում, որպեսզի չվտանգեն իրենց անձը:

Կրոնափոխությունից հետո նկատելի փոփոխությունների է ենթարկվում եզդիների տոնածիսական կյանքը: Նրանք դադարում են նշել իրենց ավանդական տոները և ծեսերը: Հետևում են միայն Աստվածաշնչում հիշատակվող տոներին և ծեսերին, ապրում են՝ ղեկավարվելով բացառապես Աստվածաշնչի պատվիրաններով: Կենսական ցիկլի ծեսերից հատկապես թաղումն ու հարսանիքը սկսում են իրականացնել ըստ նոր կրոնի պահանջների: Ինչ վերաբերում է տարեպտույտի տոներին, ապա հավատափոխները հրաժարվում են ավանդական շատ տոների կատարումից՝ նշելով միայն Քրիստոսի մահվան երեկոն:

Եթե կրոնափոխությունը եզդիներին հեռացնում է ավանդական տոնածիսական համակարգից, ապա նույնը չի կարելի ասել ավանդական երգերի ու պարերի մասին: Եհովայի վկա եզդիները, օրինակ, տարին մի քանի անգամ խնջույքներ են կազմակերպում, որոնց ընթացքում երգում են եզդիական ազգային երգեր և ազգային տարազներով պարում ազգային պարեր:

Կրոնափոխությունը հանգեցրեց եզդիների արտաքին տեսքի փոփոխությանը՝ հատկապես Եհովայի վկաների միջավայրում: Նրանք շատ մեծ ուշադրություն են դարձնում իրենց հագուկապին և հագնվում են եվրոպական ոճի զուսպ հագուստներ: Այդպիսով, իրենք իրենց ավելի առաջատար և զարգացած են համարում:

Հիսունական դարձած եզդիների արտաքին տեսքն ավելի քիչ է փոփոխվում: Նրանց հատուկ են հիմնականում զուսպ ոճի հագուստները: Կրոնափոխ եզդիների համար շատ կարևոր է, որ կրոնափոխությունն իրենց ընձեռում է տառաճանաչ

դառնալու հնարավորություն, արդյունքում նրանք կարողանում են կարդալ և ուսումնասիրել Աստվածաշունչը՝ այն գիրքը, որը, ըստ նոր կրոնական ուսմունքների, իրենց ցույց է տալիս ճիշտ կյանքի ճանապարհը:

Հատկապես կանանց կյանքում մեծ փոփոխություն է տեղի ունենում: Բացի առօրյա տան գործերից նրանք կարդում են Աստվածաշունչը և քննարկում են այն մնացած հավատացյալների հետ, կարողանում են նաև քարոզել այն իրենց բարկամներին: Կնոջ համար Աստվածաշնչի քարոզը դառնում է կյանքի նպատակ, այն է՝ բարի լուրը տարածել իր ավանդական համայնքում և փրկել իր ազգին՝ նրան դեպի լույսը տանելով: Առաջին անգամ է, որ եզդի կնոջ ուսերին է դրվում այդպիսի պատասխանատվություն, ինչը մեծացնում է նրա դերը իր նոր համայնքում և հարգանքի է արժանացնում: Ի տարբերություն ավանդական եզդիական համայնքի, որտեղ կինն ուղղակի անտեսված էր, նոր համայնքում նա արժանանում է նոր վերաբերմունքի: Այդ ամենը վստահություն է ներշնչում կնոջը՝ ավելի ամուր կանգնելու խնդիների առջև և չվախենալու քարոզել իր ընտանիքի անդամներին՝ գիտակցելով, որ իր նոր համայնքն աջակցում է իրեն, և ինքն այլևս մենակ չէ ծագած որևէ խնդրի առջև:

Կրոնափոխ եզդիները՝ անկախ տարիքից, սկսում են տառաճանաչ դառնալ, քանի որ նոր կրոնների համար շատ կարևոր է, որ բոլորը կարողանան ուսումնասիրել Աստվածաշունչը: Եթե Սովետական Միության ժամանակ բոլոր եզդիները պարտադիր դպրոց էին հաճախում, իսկ մի մասը նաև բարձրագույն կրթութուն ստանում, ապա վերջինիս փլուզումից հետո, տարբեր խնդիրների պատճառով (քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլն), շատ գյուղերում դպրոցները փակվեցին, և եզդիների երեխաները սկսեցին դպրոց չհաճախել: Առավել խնդրահարույց դարձավ բարձրագույն կրթության հարցը: Շատ երիտասարդներ, որոնք ձգտում էին բարձրագույն կրթություն ստանալ, ընդունում էին Եհովայի վկաների կրոնը՝ կարծելով դա իրենց հնարավորություն կտա բարձրագույն կրթություն ստանալ: Սակայն, շուտով պարզվեց, որ Եհովայի վկաները ևս առանձնապես չեն խրախուսում բարձրագույն կրթությունը, քանի որ նրանք կրթությունը, մասնավորապես տառաճանաչությունը դիտարկում են որպես Աստվածաշունչ կարդալու և այն քարոզելու միջոց միայն: Այսինքն, եթե ավանդական եզդիական կրոնում բարձրագույն կրթություն ստանալն արգելվում է, ապա Եհովայի վկաների մոտ այն չի խրախուսվում, բայց միևնույն ժամանակ չի արգելվում, պարզապես, համբերատար բացատրություններով կրոնափոխին բերում են այն համոզմունքին, որ բարձրագույն կրթություն ստանալը ժամանակի կորուստ է և երջանկության հասնելու համար, Աստծուն ճիշտ ծառայելու համար բարձրագույն ուսում հարկավոր չէ: Այսպիսով, եզդի Եհովայի վկաները, որոնք զբաղվում են միայն հոգևոր կրթությամբ, սովորում են արհեստներ՝ առանց որևէ մասնագիտական որոկավորում ստանալու, չեն ունենում իրենց ընդհանուր աշխարհայացքը զարգացնելու, նոր կրոնական ուսմունքներն ավելի խորը ուսումնասիրելու և այլ կրոնների հետ դրանք համեմատության մեջ դնելու բավարար կրթական մակարդակ: Ի տարբերություն Եհովայի վկաների՝ Հիսունական եզդիների նոր կրոնական համայնքում բարձրագուն կրթություն ստանալու ավելի մեծ խթան են ստանում:

Հայաստանի եզդիների կրոնափոխությունը տեղի է ունենում հիմնական և հավելյալ գործոնների արդյունքում: Հիմնական գործոնն է հանդիսանում նոր կրոնների քարոզչությունը եզդիների համայնքներում, իսկ հավելյալ գործոնն իրենց՝ եզդիների փնտրտուքներն են և արդյունքում՝ նրանց կրոնափոխությունը: Հայաստանից արտագաղթած կրոնափոխ եզդիների օրինակներն էլ նպաստում են կրոնափոխությանը: Այսինքն կրոնափոխ եզդիների սփյուռքն ակտիվ գործունեություն է ծավալում իրենց բարեկամներին նոր կրոնները ներկայացնելու և նրանց կրոնափոխ անելու համար:

Ավանդական եզդիները նոր կրոնական ուղղությունների մեջ ավելի շատ նախապատվություն են տալիս Եհովայի վկաներին: Այստեղ որոշիչ դեր է խաղում այն հանգամանքը, որ Եհովայի վկաները շատ ավելի ակտիվ են քարոզում: Ըստ դաշտային նյութերի և զրույցներում հնչած կարծիքների՝ կրոնափոխ եզդիների վրա մեծ տպավորություն է թողնում Եհովայի վկաների բարյացակամ վերաբերմունքն իրար հանդեպ, ժողովներում տիրող հանգիստ մթնոլորտը, գույնզգույն բուկլետները, գեղեցիկ տեսանյութերը և աղոթելու ժամանակ հնչող հոգևոր երաժշտությունը: Այս ամենն իրենց վստահություն է ներշնչում, որ իրենք ճիշտ ընտրություն են կատարել, և որ իրենց երջանիկ ու լուսավոր ապագա է սպասվում:

Հիսունականների կրոնն ընտրող եզդիների թիվն ավելի փոքր է, որի գլխավոր պատճառն այն է, որ Հիսունականները փաստացի չեն իրականացնում ակտիվ քարոզչություն: Այն որ եզդի Հիսունականները համեմատաբար փոքր թիվ են կազմում, դրանում որոշակի դերակատարում ունի նաև Հիսունականների աղոթելու հուզական ոճը, հեկեկոցները և ողբը ժողովների ընթացքում (ինչին ինքս եմ ականատես եղել Հիսունականների ժողովների ժամանակ և նաև բազմիցս այդ մասին ինձ պատմել են կրոնափոխ եզդիները հարցազրույցների ընթացքում):

Եհովայի վկաների և Հիսունականների կրոնական ուղղությունների ընդունումն առաջ է բերում որոշակի փոփոխություններ եզդիների ինքնության մեջ: Ինքնության այդ զարգացումներում կարելի է առանձնացնել երեք հիմնական ուղղություն.

ա) եզդիական ինքնության պահպանում. կրոնափոխությունից հետո էլ եզդիների մի մասը շարունակում է իրեն եզդի համարել.

բ) ինչպես նախկինում, այնպես էլ կրոնափոխությունից հետո՝ արդիական է մնում քրդական ինքնության ընդունումը. որոշ եզդիներ իրենց համարում են քուրդ, քանի որ, դարեր շարունակ ապրել են քրդերի հետ և հեռացել իրենց ավանդական ծեսերից,

գ) կրոնափոխությունը բերում է եզդիական ինքնության վերացման. եզդիների մի մասը կրոնափոխությունից հետո, ըստ նոր կրոնի պահանջի՝ այլևս չի ընդունում ազգությունը՝ իրեն համարելով ուղղակի Եհովայի վկա կամ Հիսունական: Եզդիական ինքնության փոփոխությունները, սակայն, ըստ կրոնափոխ եզդիների՝ կապված չեն միայն կրոնափոխության հետ: Նրանց մեծ մասը համարում է, որ իրենց ավանդական կրոնը մոտ ապագայում գոյություն չի ունենալու, քանի որ խարխլվել են դրա հիմքերը:

Նոր կրոններում եզդիների ինքնության ընկալման փոփոխության մեջ իր դերն է խաղում նաև ամուսնությունն այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Ավանդական

եզդիներն ամուսնանում էին բացառապես եզդիների հետ, քանի որ հակառակ պարագայում, ըստ եզդիական համոզմունքի, վտանգվում էր իրենց ինքնությունը: Ըստ իրենց նոր կրոնների օրենքների՝ այլազգիների հետ ամուսնությունը չի վտանգում նրանց եզդիական ինքնությունը:

Կրոնափոխության արդյունքում եզդիների՝ գրաճանաչ դառնալն ու կրթություն ստանալը փոխում է նրանց կյանքի որակը, աշխարհընկալումը, մտածելակերպը, ինչպես նաև հագուկապը, կենցաղը և ծիսական կյանքը: Փաստորեն, կարելի է ասել, որ եզդիական համայնքների համար կրոնափոխությունը դառնում է արդիականացման (մոդեռնիզացիայի) հիմք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Езиды Армении в секте «Свидетелей Иеговы» (первичный анализ мотивации), «Регион и Мир», научно-аналитический журнал 2018, том IX, N 4, сс. 111-115.

2. К вопросу об основных мотивах и причинах вступления езидов в религиозную организацию «Свидетелей Иеговы», «Синргия науки творчество, Международного конкурса», г. Кемерово, 2018, сс. 65-70.

3. Положение женщины в езидской семье как фактор прозелитизма, «Регион и Мир», научно-аналитический журнал, 2019, том X, N 2, сс. 151-155.

4. Проповедники Свидетелей Иеговы и их методы пропаганды в езидских общинах, "Danish Scientific Journal", 2019, N 22, vol. 2, pp. 70-74.

5. Կրոնափոխ եզդիների շրջանում (Եհովայի վկաներ) ծեսերի և ավանդույթների փոփոխությունները, «Բանբեր Մատենադարանի». N 28, Երևան, 2019, էջ 210-217:

6. Կրթության հիմնախնդիրները կրոնափոխ եզդիների շրջանում (Եհովայի վկաներ, Հիսունականներ), «Գիտական Արցախ», 2019, N 2 (3), էջ 433-438:

7. Changes in the Rituals and Traditions among the Converted Yezidis-Pentacostals, «Регион и Мир», научно-аналитический журнал, 2021, том XII, N 4, сс. 94-97:

Фатеми Сейедехнасим Сайедмоджтабаевне

РАСПРОСТРАНЕНИЕ НЕОПРОТЕСТАНТИЗМА СРЕДИ ЕЗИДОВ АРМЕНИИ И ТРАНСФОРМАЦИИ ИДЕНТИЧНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.04 «Этнография»
Защита состоится 11 ноября 2021 г. в 14:00 ч., на заседанииспециализированного
совета 007 по археологии и этнографии ВАК РА, действущего при
Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15).

Резюме

Данная работа посвящена распространению неопротестантских конфессий среди езидов Армении и трансформациям идентичности, наблюдаемым на фоне этого процесса.

Целью исследования является сравнительный анализ социально-экономических, социально-психологических и других причин обращения езидов в неопротестантские конфессии (Свидетели Иеговы и пятидесятники). Еще один аспект сравнительного анализа - прозелитизм среди езидских общин Армении, России, Грузии и Германии. Возможность пообщаться с информантами из всех упомянутых сообществ позволила сравнить методы и формы прозелитизма, специфику миссионерской работы, а также мотивацию перехода от езидизма к неопротестантизму у езидов разных стран.

Среди основных задач исследования следует выделить:

- анализ причин и мотивации обращения езидов в неопротестантские конфессии;
- анализ закономерностей трансформации идентичности среди обращенных езидов;
- анализ роли миссионеров, а также методов и особенностей миссионерской работы, стратегий миссионерской пропаганды;
- анализ роли езидской диаспоры в процессе обращения;
- изучение структуры новообразованных езидских общин;
- сравнительный анализ самоидентификации традиционных и обращенных езидов;
- анализ трансформации семейной культуры и специфических изменений статуса членов семьи в новых сообществах;
- анализ гендерных ролей в среде обращенных езидов;
- анализ изменений в ритуальной жизни обращенных езидов;
- анализ изменений в религиозном мировоззрении, религиозных практиках в повседневной жизни, а также на уровне связей с общественностью.

Теоретическая основа диссертации - академические исследования, посвященные вопросам идентичности, включая проблемы этнорелигиозных идентичностей, комплексной идентичности, трансформацию идентичности после обращения, а также факторы, влияющие на проблему идентичности езидов в позднесоветский и, в особенности, в постсоветский периоды. Наше исследование показывает роль сетевой работы в процессе прозелитизма, обращения и трансформации идентичности среди езидов Армении. Результаты исследования доказывают, что миссионерская пропаганда среди езидов осуществляется в основном через сеть состоящую из уже обращенных членов семьи, родственников, друзей из других стран, а также через соседей.

Методологическая основа работы - полевые исследования, которые проводились автором с 2017 по 2020 год среди обращенных езидов Армении, России, Грузии и Германии. Глубинные интервью с многочисленными членами общин и интервью в целевых группах обеспечивают достоверность полученных данных и результатов. Нами также использовался метод прямого наблюдения во время конференций и встреч в езидских центрах Свидетелей Иеговы и пятидесятников в Ереване и вне города, в регионах. Поскольку число езидов, обращенных в Свидетели Иеговы, намного больше, чем число обращенных в пятидесятники, в общине Свидетелей Иеговы было проведено значительно большее количество интервью.

В диссертации также использовались вторичные данные из различных академических работ и исследований. Результаты исследования важны как с точки зрения методологического опыта, так и теоретических знаний.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, библиографии и иллюстративных материалов (фотографий).

Введение содержит обоснование актуальности темы, цели и задачи диссертации, историографию вопроса, краткое описание работы.

В первой главе представлена структура общин обращенных езидов, их отношения с езидами из традиционных общин, причины и мотивы обращения, а также рассматривается проблема идентичности.

Вторая глава посвящена особым методам, используемым миссионерами среди езидов.

Третья глава представляет собой сравнительный анализ религиозных практик и обрядов, которых придерживаются традиционные и обращенные езиды.

Четвертая глава касается изменений в общественной и повседневной жизни обращенных езидов.

Результаты исследования подтверждают, что большинство обращенных езидов сменили веру в последние десятилетия в результате определенных глобализационных процессов, значительных изменений образа жизни в анализируемых странах, а также в результате духовного кризиса и нарастающих проблем в езидских общинах. С другой стороны, именно в последние три десятилетия неопротестантские миссионеры активно занимаются пропагандой в упомянутых общинах езидов.

У обращенных езидов постепенно формируются новые аспекты культурной, социальной и религиозной идентичности, а также принципиально новый образ мышления и жизни.

Sayedehnasim Sayedmojtaba Fatemi

SPREAD OF NEO-PROTESTANTISM AMONG THE YEZIDIS OF ARMENIA AND TRANSFORMATIONS OF IDENTITY

Dissertation for the degree of Doctor of History

on the specialization of "Ethnography" 07.00.04
The defense of the dissertation will be held on 11 November, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of SQC RA by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents str.)

Summary

The thesis focuses on the spread of neo-Protestant trends among the Yezidis of Armenia and the subsequent transaformations of their identity. The research aims at the comparative analysis of socio-economic, social-psychological and other reasons of the Yezidis' conversion to neo-Protestant denominations (Jehovah Witnesses and Pentecostals). Another aspect of the comparative analysis is the proselitism among the Yezidi communities of Armenia, Russia, Georgia and Germany. The opportunity to communicate with the informants from all the mentioned communities allowed to compare the methodology and forms of proselitism, specifics of missionary work, as well as motivation of conversion from Yezidism to neo-Protestantism among the Yezidis of different countries.

Among the main objectives of the research are the following:

- analysis of the reasons and motivation of conversion to the denominations of Jehovah's Witnesses and Pentecostals;
- analysis of the patterns of the identity transformations among the conerted Yezidis;
- analysis of the missionaries' role, as well as the methods and specifics of the missionary work, strategy of missionary propaganda;
- analysis of the role of the Yezidi diaspora in the process of conversion;
- study of the structure of the newly shaped Yezidis communities;
- comparative analysis of self-identification of the traditional Yezidis and the converted one;
- analysis of transformation of the family culture and specific changes in the status of family mambers in the new communities;
- analysis of the gender roles among the converted Yezidis;
- analysis of changes in the ritual life among the converted Yezidis;
- analysis of changes in the religious Weltanschauung, religious practices in the daily life, as well as in public relations;

The theoretical basis of the dissertation includes the academic research focusing on the identity issues, including the problem of ethno-religious identities, complex identitiem, indentity transformation after the conversion, as well as on the factors influencing the Yezidi identity issue in the late Soviet and, particularly, post-Soviet periods. Our research shows the role of the networking in the process of proselytism, conversion and identity transformations among the Yezidis of Armenia. The results of our research prove that the missionary propaganda among the Yezidis is carried out mainly through a network of

converted family members, relatives, friends from other countries, as well as through neighbours.

The methodological aspect of the work is based on the field work that was conducted by the author from 2017 to 2020 among the converted Yezidis of Armenia, Russia, Georgia and Germany. In-depth interviews with numerous community members and focus-group interviews ensure the reliability of the obtained data and results. I also used the method of direct observation during conferences and meetings in the centers of the Yezidi Jehovah's Witnesses and the Pentecostals in Yerevan and outside the city, in the regions. Since the number of the Yezidis converted to Jehovah's Witnesses is much bigger than those converted to Pentecostals, more interviews were conducted in the community of Jehovah's Witnesses.

Secondary data from various academic works and researches were also used in the dissertation. The results of the research are important both from the point of view of methodological experience and theoretical knowledge.

The dissertation consists of the introduction, four chapters, conclusions, the bibliography and illustrative materials (photos).

The Introduction contains the justification of the topic's relevance, the aims and objectives of the work, the historiography of the problem, a short description of the work.

The first chapter presents the structure of the communities of the converted Yezidis, their relations with the traditional Yezidi communities, the reason of and motives for the conversion, and the problem of identity.

The second chapter focuses on the special methods used by the missionaries among the Yezidis.

The third chapter presents a comparative analysis of the religious practices and rites followed by the traditional and converted Yezidis.

The fourth chapter touches upon the changes in social and daily life among the converted Yezidis.

The results of this study confirm that most of the converted Yezidis have changed their faith in the recent decades as a result of certain globalization processes, significant changes of the life-style in the countries under analyses, as well as a result of spiritual crises and growing problems within the Yezidi community. On the other hand, it is exactly the last three decades, that neo-Protestant missionaries have actively propagated in the mentioned Yezidis communities. After the conversion, new aspects of cultural, social and religious identity, as well as principally new way of thinking are being gradially shaped, what results in the above discussed changes and trasnformations. The converted Yezidis are, in fact, building up principally new communities with the new menthality and new way of life.